

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ENCYCLOPÉDIE (مجموعه علوم)

ԽՄԲԱԳՐԱԳԵՏ

ՏՆՕՐԷՆ

Վ. ԲՈՒԱՏ

Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 12

1898 ՄԱՅԻՍ 23

Ամեն թղթի համար Տարեկան կանխիկ 50 դահ: Վեցամսեայ 25, իսկ եռամսեայ 13 դահ: Օտար երկրաց համար Տարեկան կանխիկ 15 ֆրանկ: Թղթատարի ծախքը խմբագրութեան կը վերաբերի: Հասք 40 փարայ: Գաւառներէ բօսքի բոլոր ուղիքներով 100 դրուցի թիւ 105 դրուց:

ԲՈՎԱՆ ԳԱԿՈՒԹԻՒՆ

- Վ. ԲՈՒԱՏ. — Հանրագիտակ եւ Հանրային կարծիքը:
ՍԱՐԳԻՍ Յ. ՊՊԵՆԵԱՆ. — Տերսիմ. — Մեծուր լեռը կամ Օվաճըզի դաշտը:
Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ. — Ապագայ դարավերջիկները:
ՅՈՒՇԱՐ. — Մեռելներուն արշաւանքը:
Վ. ԲՈՒԱՏ. — Շերամաբուժութիւնը — Բաթիկոնեան դրութիւնը:
Վ. ԲՈՒԱՏ. — Մուկերը ոչնչացնելու միջոցներ:
ՏԱՆՏԻԿԻՆԸ. — Խոհանոցի բաժինը. ելակի անուշ:
Թղթակցութիւնը:
Զրօսանք. — Հանելուկ թիւ 4:



Հատը 40 փարայ

Կ. ՊՈՒԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Կ. Պոլիս Զաւմաքիլար եօզուռու Զիւմպէլի Խան Թիւ 28

ՉԲՕՍԱՆՔ

Լուծում քիւ 3 Հանելուկի

Նամակադրոշմ (Բ-Լ)

Դրոշմաթուղթ եմ, կամ բուլ եմ,
Վերջապէս թըղթի կըտոր մ'եմ.
Տըպագրական երկունքէս վերջ,
Հանգընցայ նամակատան մէջ.
Կընիքով մը ապտակեցին,
Տեղւոյն անունը դըրոշմեցին.
Մութ ընդունարան նետուեցայ,
Մեծ ու պզտիկ եղբայր գտայ.
Որք են տասնոց ու քըսանոց,
Երկունքնոց և հինգ զուրուշնոց.
Սուրհանդակի պայտսակին,
Մէջ կապեցին ամենքս ուժգին,
Ցըրուիչներ հեռու տեղերուն,
Վերջ տուն մեր պաշտօններուն.
Համայն աշխարհ մեզ թըռցուցին,
Հաւաքողներ դուրգուրացին.
Բայց արժէք չը գիտցողներուն,
Կոխտուեցանք տակ ոտքերուն.

3. ՇԷԼԵՖԵԱՆ

Թիւ 3 Հանելուկը լուծեցին Տեառք
1. Ար. Ա. 2. Օր. Վերթին Պայթարեան
3. Յ. ՇԷԼԵՖԵԱՆ. 4. Յ. Չափեան (Իգ-
միտէն) 5. Մ. Պարոնեան.

Կը խնդրենք Պ. Ար. Ա. Է որ դիմէ
Էսկի Չապթիէ ճատտէսի թիւ 30, Մար-
տիրոս Էֆ. Արայճեանի՝ իր նուէրը ստա-
նալու համար որ է 100 բուլ զանազան
տեսակի ֆրանք արժէքով.

ՇԷԼԵՖԵԱՆ Էֆ. թիւ 2 Հանելուկի
նուէրը աւելցնելով եռամսեայ մ'ալ
կը զրկէ Ատաբաղար Ս. Կարապետ թաղի
սրճարանը, Տ. Ս. Սրապեանի.

Կ'ուզարկենք մեր գործակալին.

Կարդ մը տեղերէ նամակներ կ'ստա-
նանք, որով մեզ կը հարցնեն թէ՛ հա-
նելուկներ, հարցումներ, խաղեր և նը-
կարհանելուկներ կ'ընդունինք հրատա-
րակելու համար.

Արդ կը յայտարարենք թէ՛ պատրաստ
ենք հրատարակել և նոյն իսկ նուէր
ալ տալ առաջին լուծողին. Պայմանով որ
լուծումներն ալ միասին զրկուին մեզի.



ՀԱՆԵԼՈՒԿ ԹԻՒ 4

Հողի զաւակ, ձեռակերտ եմ,
Անպաճոյճ և կամ զարգարուն.
Հաճելի և օգտակար եմ.

Սակայն չ'ըլլայ փորըս պատուես,
Առիւծ, վազըր, կամ այլ գազան,
Սոսկմամբ ընդհուպ դէմը գտնես.

Իսկ թէ գլուխ կըտրես կիսով,
Ապահով լե՛ր, ամրան տապէն,
Կ'ազատիս դու զովանալով.

Թէ ոտքս մասամբ կտրես, նետես,
Կ'ըլլամ մի նիւթ խիստ օգտակար,
Որ ապակոյ և շէնքի մէջ գործածես.

Թէ յայտ վիճակ, աւելցնես,
Ծայրէս մի տառ, ծովու մ'զաւակ,
Կ'եղնէ ահա՛ դէմը քաջապէս.

Նիկոմիդիա.

L. H. N.

Առաջին անգամ լուծողը պիտի ստա-
նայ իբր նուէր Տր. Փեշտիմալճեանի
Պատմ. Մարդկային Պատուաստին ա-
նուն գիրքը, լուծումները մինչեւ Հինգ-
շաբթի առաւօտ ընդունելի են.

ՄԵՐ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՈՐԷԻՑ

1. ԱՐՄԱՆԱՆԱՆ ՆԻ Ս. ԲՄԻԳԷԻ

Կ. Պոլիս Ֆանսիէան իսանի տակ քիւ 3

Սոյն վաճառատուն պատրաստէ մատա-
կարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝
ամէն տեսակ թարմ դեղօրայք. վիրա-
բուժական գործիքներ, Անգլիական և
Դաղը. պատրաստ դեղեր, գծեալքներ,
գինիներ և հանքային ջուրերու մեծ
մթերք մը, յարմար գներով. Լ. Աշխե-
նեան և Ս. Էմիրդէ լնկերութիւնը երկաթ
ատեն անձնական փորձառութիւններ
ունին. Ամեն ջանք և աշխատութիւն չեն
խնայիր իրենց յաճախորդներն գոհաց-
նելու համար, մասնաւոր ուշադրութիւն
կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց
կը զրկեն դեղօրայք, ամենայն արա-
գութեամբ, թարմ և մատչելի գներով.

Չարաճճի մուկներու և լուերու եւլն-
համար միջատասպան փոշի Poudre insecti-
cide մեծաքանակ բերել տուած են
ուղղակի Տալմացիայէն, որուն համար
մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւի-
րենք յարգոյ հասարակութեան.

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ



ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopedie

{مجموعه علوم}

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 12

1898 ՄԱՅԻՍ 23

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԵՒ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԸ

Առ. Պրոֆ.

Ձեր նախորդ յօդուածով մեր վարժարաններու երկրագործական դասականութեանց պէտքը շեշտելէ վերջ, կ'ըսէիք թէ՛ Սրմաշի վանքը ժամանակաւ մէկ քանի երկրագործական գործիներ գնած է, որոնք աւրուելով այժմ երեսի վրայ մնացած են, կը փափաքիք որ զանոնք վերաշինելու եղանակները պարզեմ բացայայտ:

Ստուգիւ ուրախ պիտի ըլլայի, եթէ կարողանայի այդ մասին շնչին ծառայութիւն մը մատուցանել վանքիդ, բայց նախ՝ պէտք է գիտնալ թէ՛ անոնք ի՞նչ տեսակ գործիքներ են. երկրորդ, որ մասերը աւրուած են, և երրորդ՝ գործիքի մը նորոգութիւնը հարկաւ կարելի չէ հեռուէն կատարել:

Թթաստաններու մասին գրածնիդ շատ շիտակ է, և թէ մենք պարտաւոր էինք նախ՝ թթենիներու մշակութենէն սկսիլ, յետոյ շերամատան մը կարգադրութե-

նէն և շերամաբուծութիւնն ալ իր կարգին. սակայն շատերու թախանձանաց համաձայն պարտաւորեցանք այս կերպ շարժիլ:

Սովորելու շատ բաներ ունինք. անշուշտ ամենը մէկէն չենք կրնար, պէտք է սպասել, և քիչ մ'ալ պարագամբերու բերմանց հետեւիլ:

Շատեր կ'ըսեն, Հայաստան պէտք է միմիայն արհեստով և գիտութիւնով զբաղի, Ազգն՝ այդ տեսակ հանդէսի մը պէտքն ունէր արդէն. իրաւունք ունին Ուրիշներ կ'ըսեն. այսօր մեզի ամենէն աւելի շահագրգռողը գիւղատնտեսա-

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Ահաւասիկ Հանրագիտակ իր առաջին հոսանքան կը բռնէ, ըոս կարելոյն իւր նպատակին ծառայելով: Շնորհակալութիւն ամեն անոնց՝ որոնք զմեզ ֆաջալեւելէ հս չի կեցան: Բայց որպէս զի մասակարարութեան մասին դժուարութիւններու չի բաղխինք, կը խնդրուի մեր յարգոյ բաժանորդներէն. որ ժամանակին իրենց բաժնեգինն ղրկելու մասին անփոյթ չի գտնուին:

կանն է. և անկէ աւելի յարմար առիթ մը չէր ըլլար Հանրապետութեան միմիայն անով զբաղելու և զբաղեցնելու ընթերցողները. ասոնք ալ իրաւունք ունին:

Բայց ոմանք ալ կ'ըսին. ես ոչ երկրագործ եմ. և ոչ ալ արհեստագործ. եթէ միմիայն գրական թերթ մը ըլլար, կը հետաքրքրուէի անով:

Ասոնց քով կարգ մ'ալ կայ, որոնք աւելի կը փափաքին թերթը վիպագրական և զաւելտական պարունակութիւններով, կամ ուրիշներ ալ ամեն օր օրաթերթերու մէջ կրկնուած Ազգ. և Քաղ. լուրերու հաւաքածոներով տեսնել:

Որչափ մարդ, այնչափ կարծիք. անշուշտ ամենն ալ իրաւունք ունին:

Բայց եթէ ամենուն բաղձանաց համաձայն վարուիլ հարկ ըլլայ, պէտք է այն ատեն զատ զատ հանդէսներ հրատարակել, որոնց և ոչ միոյն գոյութիւնը և յարատեւութիւնը կրնայ ապահովել մեր ժողովուրդը, որ ընթերցասէր չէ ըստ բաւականի:

Եւ մենք հետեւելով ըստ կարելոյն մեր թերթի անուան յարմարագոյն ուղղութեան մը. պիտի զբաղինք միշտ ամեն կարգի օգտակար խնդիրներով, որոնք աւելի հացի խնդրոյն շուրջը պիտի դառնան, ինչ որ մեր յարգելի ընթերցողաց մեծագոյն մասին և ողջամիտ հասարակութեան ալ գաղափարը կը կազմէ: Սակայն՝ ամենն այս չէ. շատեր կը կարծեն թէ Հանրապետ. ալ ուրիշ կարգ մը թերթերու պէս շուտ մը յագնելով չի պիտի քալէ, այս մասին կրնանք վստահացնել մեր Պատ. ընթերցողները թէ Հանրապետ. յարատեւութիւնը ապահովուած է, և մօտերս նոր կարգադրութիւն մ'եւս ընելով՝ — որու ձեռնարկած ենք արդէն — աւելի վստահութիւն պիտի կրնանք ներշնչել ժողովրդեան, միշտ ջանալով հանդերձ թերթին պարունակութիւնը հասցնել ճո-

խացնել և շահեկան ընելու:

Եւ ոչ մէկ թերթի հրատարակիչ, ժողովրդեան դրամը չորթելու համար հրապարակ չի նետուիր. այլ միշտ հանրութեան օգտակար ըլլալու նպատակով, և եթէ անոնցմէ ոմանք չեն յաջողած, ժողովրդէն քաջալերութիւն չի գտնելով, ակամայ դադրած են, կարեւոր դրամագլուխ մ'ալ վրայ տալով: Ամեն բան սահման մ'ունի. հրատարակիչ մ'ալ մինչեւ որոշեալ աստիճան մը վնասել աչքը կ'առնէ, բայց երբ այդ սահմանը կ'անցնի, ժողովրդեան իր հրատարակութեամբ չի հետաքրքրուելովը, կամ ինչպէս սովորութիւն է մեր մէջ, ուրիշ առնելով առանց դրամի, լրագիր կամ հանդէս կարդալու մեղադրելի սովորութիւնով. տարակոյս չի կայ թէ, անկա չի պիտի կրնայ ստիպալ և իւր հրատարակութիւնն ալ պիտի դադրեցնէ:

Կը փափաքիք նաեւ որ, թերթին մէջ հրատարակուած կարեւոր ճիւղերը, կրկին տպելով ուրոյն գրքոյկներու վերածենք. իրաւունք ունիք, արդէն առաջուց մտածած էինք այդ կէտը. նպատակ ունենալով «Հանրապետ. Մարտիրոս» անունով հետզհետէ մանր գրքոյկներ հրատարակել արհեստներու և ճարտարարուեստներու վրայ, բայց գիտնալով որ, ըստ բաւականի գնողներ չի պիտի կրնանք գտնել. և հետեւաբար ապագրական ծախքերնիս անգամ չի գոցելով, միշտ կարեւոր վնասներու պիտի ենթարկինք. չուզեցինք անխոհեմութեամբ այդպիսի բազմածախս գործի մէջ մը նետուիլ:

Ձեր ըսածը իրականութիւն կրնար ստանալ, եթէ առաջուց ապահով ըլլայինք ծախսուելու մասին. քանի որ անկա չի կայ. մենք ալ առ այժմ կը բաւականանանք միմիայն ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ հրատարակութեամբ ժողովուրդին օգտակար ըլլալու ջանալ. բայց այդ մասին ալ անսխալ չի պիտի գտնուինք, պէտք է դաժ կարգադրութիւնը ընելով, յարմարագոյն առթի մը մէջ առաջին փորձ մը պիտի ընենք:

ՏԵՐԱԾՈՒՄ



ՄՆՁՈՒՐ ԼԵՌԸ ԿԱՍ ՕՎԱՃԸԳԻ ԴԱՇՏԸ

(Շար. 8-րդ Գ և Վերջ)

Օվաճըգ դաշտին արտադրութիւնները թէ պետեւ առատորէն կըլլայ, սակայն տեղացիք արգասաւորելու փոյթը չունենալով, թշնամարար միշտ իրարու տնկածն ու մշակածն ոչնչացնելու հաճոյք մ'ունին: Արդարեւ բուսեղինաց՝ պտուղները և ընդեղէններ, ըր շատ բեղմնաւոր կըլլան, բայց ցաւալի է ըսել թէ այս բնակիչները սոխի և սխտորի կարօտ են միշտ:

Հոս ձմեռը Նոյեմբերէն կ'սկսի ու անհամեմատ ձիւն կը տեղայ. 1—3 մեթր թանձրութեամբ կը ծածկուի գետինը ձիւնով. այս պարագային տեղացւոյ երթեւեկութիւնները չը դադարի. կէս կէս մեթր տրամագիծով աղտուած «հետիք»ներ կը հագնին ոտքերնին. թէպետեւ ձիւնին մէջ չը մտնիր, բայց անվարժներու համար շատ դժուարին է քալել:

Տեղւոյն ձմեռուան որսերն են սագեր, բաղեր և տեսակ մը մեծ կաքաւներ (ուլքէքլիկ), սակայն բնակչաց համար այնքան հաճոյալի չէ ոչ ուտելը ոչ որսալը:

Մանր դուարաց ուտելիքները, արդէն պատրաստեալ չաշուր խոտ և կալնոյ տերեւներ են. իսկ կովերու և եզներու համար թէպետեւ կան ընդեղէններ, սակայն ձիւնին տակէն կը հանեն գաղի թարմ արմատներ, ու ջրով թրջելէ և լուռլէ յետոյ, յօտոցով կը մանրեն ու այնպէս կը կերցունեն որ ձմեռուան ցուրտին դէմ շատ օգտակար և սննդարար է:

Օվաճըգի և գրեթէ ամբողջ Տերսիմի ընակչաց տները ընդհանրապէս քառանկիւն և միայրի են, ու փոքր լուսամուտներով ընդարձակ տարածութիւն մը ունին: Տանը մէկ ճակատը երկու մեթր լայնութիւնով, շինուած է վառարանը: Կրակ վառելու համար, ծառի կոճղերը առանց ճեղքելու, ամբողջապէս վառարանի մէջ դնելով կը վառեն: Տանը միւս ճակատը, քուրճերու մէջ

լեցուցած ցորեն, ալիւր և ուտելիքներ կարգաւ շարուած ու ծածկուած են կապերտներով. երկրորդ ճակատը շարուած են նմանապէս անկողիններ, վերմակներ, բարձեր, եւայլն: Հարուստներու այս կահերը, ամբողջապէս մետաքսեայ են. իսկ միջին կամ աղքատ դասակարգը հիւրի կամ զարդի համար անհրաժեշտ է որ ունենայ, գոնէ մէկ մետաքսեայ անկողին և վերմակ:

Գարունը կը սկսի Ապրիլ ամիսէն. ձիւնին տակէն կը ցցուին նախաբուս խոտեր մասնաւորապէս սխտորխոտը, որ ամեն խոտերէ առաջ բուսնելով, կանանչակարօտ կենդանիներու սնունդ կը մատակարարէ. իսկ կաթնոտ կենդանիներ այս խոտէն ուտելով իրենց կաթէն, սերէն, մածուէն նոյն իսկ իւղէն և պանիրէն սխտորի համ կուգայ: Մայիս ամիսը նոր կենդանութիւն մը կուտայ դաշտին. այցելու թռչունները վերստին եկած ու գրաւած են իրենց տեղը, մանաւանդ կուռնկը իւր երկայն ոտքերով ու երկայն պարանոցով կը խառնուի դաշտի հօտերուն և ընտանի անասնոյ մը պէս կ'արածի:

Հոս կ'այցելեն Շաղախցի քուրթ աշիրէթներ իրենց հօտերով, և մինչեւ Հոկտեմբեր ամիսը մնալով կը վերադառնան ձմեռանոց: Երզնկայի, Ակնայ, Քեմալի, Արաբկիրի, Չմշկածագի և մինչեւ անգամ Խարբերդի իւղն, պանիրն և մսացուն այս աշիրէթները կը մատակարարեն: Իւրաքանչիւր աշիրէթ ունի իւր լեռը կամ արօտատեղին, օտար մը իրաւունք չունի հօն իջեւանելու:

Դաշտին արեւմտակողմը՝ Մեծուր գետակին Ակնայ մօտիկը կայ Ծերենիկ կամ Զերենիկ գիւղը՝ ուր կը նստի կառավարութիւնը (գայմագամ): Հոս բացուած է նախնական վարժարան մը, և ուսուցչին ամսաթոշակը կառավարութիւնը կուտայ, Ծերենիկի արեւ. հիւսիսային կողմը կայ Քէտէկ կամ Գետակ գիւղը՝ ճերմակ բլրակներու վրայ ձորով մը երկուքի բաժնուած. այս ձորամէջէն կը հոսի գետակ մը, ու քիչ յետոյ կը թափի Մեծուր գետակին մէջ: Գետակէն դէպի արեւելք ընթանալով, թէ լեռնակողմերու վրայ և թէ դաշտին մէջ՝ երկու կողմի վրայ կը հանդիպին Խզըլ, Բարտի, Մարխոյ, Հոփիկ, Ատա, Առեւ, Սաջբերի, Բլուր, Հարսի, Աղ.

տատ, Աղբանոս (Թերեւս Արեղանոց) եւայլն գիւղերու, վտակներու եւ ուղիներու: Աղբանոս գիւղը սքանչելի գիրք մ'ունի՝ դաշտին արեւելակողմը լերան կուրծքին վրայ շինուած, ուրկէ կ'երեւի ամբողջ դաշտը: սորա հարաւակողմը՝ գետակին միւս կողմը կը գտնուի Մառուկ գիւղը: սա կը վերաբերի այժմու գլխաւոր Սէյիտ՝ Սէյիտ Իպրահիմին: հոս կը վերջանայ դաշտը՝ ու կ'սկսի Կալան կամ Տուժինք լեռները, որք Մնճուր լերան Արեւ. հարաւային կողմը 15 ժամ հեռաւորութիւն ունին: Այս լեռնցիքու լճեր տարբեր են դաշտին քուրթերէն: Նախ իրենց բնավայրէն հեռացած չեն բնաւ եւ չեն ուզեր հեռանալ: Իրենց պիտոյքները կը գնեն Երզնկացի փերեզակ կամ մանրավաճառներէ, եւ փոխարէնը կը վճարեն իւզ, այժ կ'ամ գառ, գորգեր, եւայլն: Գորգերու գործը յատուկ է իգական սեռին, մասնաւորապէս օրիորդներու, որք այս գործի շնորհիւ կը կը բարձրացունեն իրենց արժէքը:

Ասոնց մէջ ամուսնութիւնը խիստ դժուարին է եւ մասամբ գիւրին չ'գժուարին է, վասն զի երիտասարդ մը ամուսնանալու համար կը պարտաւորի մեծ մեծ գումարներ տալ աղջկան ծնողացը, հինգ «քէսէ»էն մինչեւ հարիւր քէսէ (մէն մի քէսէ 500 դրուչ հաշուելով): Դիւրին է, աղջկան հետ համաձայնիլ ու փախչիլ օտար աշիրէթի մը մէջ: այս վերջնոյն տեսակէն շատ կը պատահի, եւ արիւնահեղ կռիւներու պատճառ կըլլայ, զի սովորութիւն եւ պարտք է պաշտ պանել հալածեալ ամուսնիքը, որք օտար աշիրէթի մէջէն փախած ու պաշտպանութեան կը կարօտին: Սոյն լեռնոց մէջ կան Հայ արհեստաւորներ, կլայեկող, պայտարագործ, եւ դերձակ, որք կը վայելեն յարգ, պատիւ եւ ազատութիւն երթեւեկութեանց:

Բնութեամբ բարի են այս լեռնցիք. ուրիշին չարիք չեն ուզեր, սակայն հնազանդութիւն կ'ամ օտարներու հրամանակատար ըլլալ, բոլորովին անտանելի է իրենց համար: Կալան լեռը՝ լերկ ու մերկ կը բարձրանայ հանդէպ Տուժինք լերան: սա անառիկ դիրք մ'ունի իւր նեղ անցքերով: արդարեւ արօտատեղիները շատ եւ ընդարձակ են, բայց մշակելու յարմար տի մը հող չունի, եւ ցորենը կը գնէ Երզնկայէն: Կալան

լեռնցիներու իւզը, պանիրը եւ մեղրը շատ սքանչելի է: Այս լեռը, ինչպէս նաեւ Օվաճըգի լեռները ունին բազմաթիւ ընկուզենիներ 1—2 մեթր բոլորակ տրամագիծով: Կան նաեւ վանքերու եկեղեցիներու եւ գերեզմաններու տեղեր, սակայն եթէ տեղացիք աւանդաբար ստացած ու պատուիրապահութիւնը յարգած չըլլային, կարելի չէր գիտնալ թէ ո՛ր կամ ո՛ր պիտի տեղեր կը գտնուին այն սրբատեղիք:

Օվաճըգ գտնուած միջոցիս՝ Արտան-Ուշաղի ցեղապետը, իւր առն հարաւային կողմը յարմար գետին մը վրայ ուրիշ տուն մը եւս շինելու համար խորհուրդ հարցուց, աւելցնելով միանգամայն թէ՛ հոն սրբատեղի մ'է, արժան կ'ամ ներելի՞ է արդեօք տուն մը շինել: Երբ ես, գոնէ հետք մը տեսնելու համար գետինը կը գիտէի, Աղան ինքն իրեն մտածելով. «Եօ՛գ, եօ՛գ օւրազ, չիւնքի էտէպխանէ վէ հայվանլար գոմը տախի ետփըլածագ» ու յետոյ ընտրեց այն տեղէն քանի մը քայլ հեռի արեւմտեան կողմը: Առ հասարակ կը հաւատան որ՝ այսպիսի տեղ մը տուն շինել ու բնակութիւն հաստատելը խիստ վտանգաւոր՝ հետեւաբար ոչնչանալու նշան է:

Սաղաջուր գետակը, Առել կ'ամ Սաղաբի գիւղերու առջեւ կը միանայ Մնճուր գետակին եւ Սէյիտ Իպրահիմի ապարտնի առջեւէն դէպի արեւելք սահելով, Կալան լերան արեւմտեան ստորտաի կիրճերէն շեղելով կը ընթանայ դէպի հարաւ: իւր ձախակողմի վրայ կը մնան Բախ ու Հաւիկ աւանները, այս վերջնոյն մօտ է Թօրուտ գիւղը՝ ուր կը գտնուի Հալւորիկ վանքը: Գետակի աջակողմը կը վերաբերի Չարանճագի, իսկ ձախակողմը Մազկերտի Միացեալ գետակները՝ Մնճուր եւ Սաղաջուր, Վասիկերտ կ'ամ Վասակ-Կերտ աւանի մօտ կը խառնուին արեւ. եփրատի: սա եւս իւր աջակողմի եզերաց վրայ ունենալով Փշափանք, Թիւլ, Բերդակ, Գոմրուշ աւանները, Շաղաթոյի աշիրէթներու գիւղերը եւ Տէրտէրէջ գիւղը, կուգայ կը հասնի Աշվան գեղ, ուրկէ երկու ժամ յետոյ կը խառնուի հիւս. եփրատի:

ՍԱՐԳԻՍ Յ. ՊՕՂԻԿԵԱՆ

ԱՊՍԳԱՅ ԴԱՐԱՎԵՐՋԻԿՆԵՐԸ

Փառք Աստուծոյ, հիմա ունինք կարգ մը դարավերջիկ երիտասարդներ, որոնք հոգւոյ աշխուժութենէն աւելի արտաքին շարժումներ, բայց ապագային պիտի ունենանք դարավերջիկներ, որոնց քովիկր դաճածներ պիտի երեւան հիմակուանները:

Շատ անգամներ տեսած էք պզտիկ տղաքներ ու աղջիկներ, որոնք կատարեալ զեզեզիկ հովեր ունին, անոնք օրինակած են ինչ որ կը տեսնեն ամեն օր:

Հաշիւ 14—15 տարեկան կ'ըլլան ահա զգալի փոփոխութիւն մը կը տեսնես իրենց կեանքին մէջ, փոխանակ չուսման և գիտութեան հետաքրքրուելու, կը սկսին մեծի հովեր առնուլ:

Օր մը կը տեսնես որ իրենց կուրծքին վրայ վարդ մը դրած են:

Առաու մը կը տեսնես որ քթերնին ակնոց մը անցուցած են:

Յերեկ մը կը տեսնես որ Սբաճախար դարեջուր կը խմեն:

Վերջապէս կը տեսնես ու կը տեսնես, թէ գրպաննին տասը փարա չուսնեալով ոսկիներով կը խօսին, Թրանսերէն չը գիտնալով՝ գրպաննին Petit journal Կայ, Հայերէն լեզուն արհամարհելով Թրանսերէն կը խօսին — բնականաբար լեզուն կտոր կտոր ընելով — գլուխնին գլխարկ կը գնեն, ձեռքերնին ձեռնոց, և վերջապէս ինչ գիտնամ, օր մ'ալ կը նայիս որ սիր սհալութիւններու կը սկսին:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ անանկ կը տեսնեն:

★ ★ ★

Շիտակը ես բոլորովին հակառակ եմ այդ կարգի տղաքներուն, ես կը պահանջեմ որ տղաքները ճշմարիտ տղաքներ ըլլան, ձեղի կը հարցնեմ՝ կապիկին բանթալօն և չաքէթ հագցուր կ'ըլլայ:

— Ո՛չ:

Ճիշդ ատոր կը նմանի երբ տղաքները կուզեն նմանիլ իրենց մեծ եղբայրներուն կամ հայրերուն:

Այս ցաւալի երեւոյթը որ հետաշեռէ կ'աւելնայ մեր մէջ, մեզ խորհեցնել կուտայ որ ապագայ սերունդը կայտառ, առողջ սկզբունքներով սնած չի պիտի ըլլայ:

Անոնք, յարգանքը բոլորովին մոռցած են, արհամարհանքը իրենց դէմքին վրայ կը թրթռայ, և աննպատակ գնացքով մը կը մեծնան:

Անոնց ինչ ըլլալիքը մեր նոր սերունդը արդէն կը պատկերացնէ իր վրան:

Մեր ապագայ դարավերջիկները՝ այն աստիճան տափակ խօսակցութիւններ ունին՝ որ կ'արժէ հոս նմայշ մը դնել:

Կիրակի օր մը՝ ծովու եզերքը պտտող չորս պատանիներու խօսակցութենէն քաղուած:

— Քուկինդ չը պատիր կոր նէ՞:

— Անիկա ձգեցի, հիմա հոռմի աղջիկ մը գտայ որ, ամա աղւոր աղջիկ է:

— Ծօ անիկա ալ գէշ չէր, ինչ կ'ըսես ես քոթէ ընեմ տըվոր հետ:

— Ի՞նչ կուզես նէ ան ըրէ:

— Ան չէ ամա, սա կ'սիկը նայէ ի՞նչ աղւոր է:

— Հա Ծօ, . . . աղաին կնիկն է:

Է վերջը, ալ գործ չունիս նէ մտիկ ըրէ, այս կարգի խօսակցութիւնները վերջ չունին, կ'ըսեն ու կ'ըսեն, և իրարու ըսածն ալ մեծ հաճոյքով մտիկ կ'ընեն:

Իրենց ինչ փոյթն է որ շահեկան նիւթերով զբաղին, կամ իրենց օգտակար խօսակցութիւններ ունենան, տափակ գրութիւնը ողջ ըլլայ:

★ ★ ★

Օր մ'ալ կը տեսնես որ այդ անմեղուկ տղաքները (երբեմն), բոլորովին չափէն դուրս կ'ելեն, Ղալաթայի և Բերայի կողմերը սըլք սըլք կը պտտին:

Գիշեր մը խօսք մէկ կ'ընեն, և շանքները կը պտտին:

իրենց քաջալերութիւն կ'ուտան երիտասարդները :

Եւ կամաց կամաց օր մին ալ կը տեսնես որ՝ 15—16 տարեկան կըլլան, և ալ կը սկսին թաթխուիլ մոլութիւններու շէշին մէջ :

— Պրծան կորսուեցան

Եւ այս ամենը մեր անփութութենէն, մեր լռութիւնը ու կուրութիւնը իրենց քաջալերութիւն տուաւ :

Քանի քանի տղաքներ ճանչցած եմ, որոնք դպրոցէն փախած՝ և պոտիլ գացած են :

Ծնողքները ամենէն աւելի յանցաւորներն են, անոնց «ինչուս պէտք է, ի՞նչ ընեմ» ները պատճառ կըլլան պղտիկ սերունդի ապականմանը :

Տղաքները թող պղտիկ ու անմեղ մընան, անոնք ոչ թէ իբր մեծ մեծնան, այլ իբր անմեղուկ մանուկներ մնան, անոնց ալ ժամանակը կ'ուգայ, թող այն ատեն չափահասի հովեր առնեն, երբ արդէն իրենց խելքը ամեն բանի կը հասնի :

Ծնողքները և կրթիչները սուր աչերով պէտք է հսկեն մեր պղտիկներուն վրայ, չարը ու յոռին պէտք է զգացնել տան անոնց ու ցոյց տան աղնիւր ու բարին :

Մեր տղաքները փոխանակ Պօքաչեայ և սիրավէպեր կարդալու, թող Աւետարանը ու թշուառները կարդան :

Առաջինները վերացական, անհաստատ, աննպատակ կ'ընեն, մոլութեան քաջալեր կըլլան, բայց Աւետարանը ու թշուառները կուսուցանեն մարդ ըլլալու միջոցը, ինչո՞ւ մեր տղաքներուն ինքնօգնութեան դասեր չի տանք, ինչո՞ւ չուսուցանենք այն ամեն բաները, որոնք պիտի նպաստեն զիրենք գործնական մարդեր ընելու :

Հերիք չէ այլեւս՝ ինչքան վերացական դատարարականութիւն տուինք նէ, քիչ մ'ալ փոխենք դրութիւնը :

Ծնողքներ հսկեցէք ձեր զաւակներուն վրայ, և լաւ հովեցէք :

Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՄԵՌԵԼԵՆՐՈՒՆ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Բնութեան մէջ կարգ մը հրաշալիքներ կան, որոնք նախապաշարումներու կարգը դառնաւ են, — չորին հետ թացն ալ կը վառի — ես ալ ժամանակ մը իրաւունք կուտայի ինծի նման լուսաւորեալ ազատամիտներուն, որոնք ամեն բանի չեն հաւատար. սակայն այժմ, աչքովս տեսածիս չհաւատալ ձեռքս չէ. եթէ տեսածիս ստոյգ ըլլալը հաստատող անհերքելի ապացոյցներ չունենայի, չ'պիտի համարձակէի դիտական թերթի մը մէջ պատմել հաւատացածս, այս համարձակութիւնս առաջին ապացոյցն է պատմութեան իրական ըլլալուն :

Տ. քաղաքին մէջ ծխախոտի մշակութեամբ կոկիկ դիրք մը չինած էի Ռէժիին կանոնաւոր դործառնութեանց ժամանակ. երբ կանոնաւորն ծնաւ զանկանոն, — չեմ գիտեր թէ Ռէժիի օրէնքները փոխուեցան մի', Սիրքէճիէն Զէքմէճէ երթեւեկող կառախումբին քօնծիւքծիւքներուն պէս ստորին պաշտօնեաներս ձեռք անցաւ մի' գործը — ամեն ատեն 7—8 դահեկանի ծախուած ապրանքս, առաջին պատեհութեամբ Ռէժիի նորաչէն և խոնաւ շոեմարանին մէջ երկուսովս սպասեց և մինչեւ գին որոշուած օրը սեւցաւ, ապրանքիս կէսը վճարուեցաւ օրսան 40 փարայի հաշով, կէսն ալ հրապարակային խարուկահանդէսի մը յատկացուեցաւ. Յոյները իրենց աթէշ կիճէսին ունին, Ռէժիին ալ իր աթէշ կիւնտիւղուն, բայց անոնց կրակը զուարթութիւն կը բերէ անոնց հոգիներուն, ասոր կրակը հոգիս ալ մէկտեղ վառեց, ոչնչացայ. ի՞նչ ընեմ, ուրիշ ճար չ'կայ, տունը հաց կ'ուզեն : Մանեթիձիզմ եղածի պէս, որտիս հրամանին հնազանդելով, հետեւեալ օրը որոշեցի՝ ցէսարէմ Փապրիզասըներուն չ'սեւցած ծխախոտի մեղրագոյն տերեւներ հայթայթելու գործին մէջ մտնել. կամաւոր զինուոր գրուելէն աւելի ծանրաշիւղ խնդիր մ'է այս : Փայլուն զէնքերս վրաս տեղաւորելով, անմիջապէս մ'ալ սեւ ձիս հեծայ, ձի մը, որուն ընաւ սանձ պէտք չէ, թեթեւ հսկումով մը միտքս կը հասկնայ և Մուտանիայի երկաթուղիէն աւելի ճամբայ կ'առնէ, ինձմով

150 օխա բեռ փախցնելու պայմանաւ : Չերկրնցնեմ , քանի մը տարուան մէջ Ն . քաղաքէն և շրջակայ գիւղերէն չատ հակեր փոխադրեցի Տ . քաղաքը . գիշերային ճամբորդ մ'էի , աւազակը և գօլճին գիշեր տենքիչ մը դժուար կը մօտենայ ձիաւորին : Գալով բուն պատմութեանս , գիշեր մը հակերովս միասին անտառէ մը դուրս կ'ելնէի երգելով , երգերս ես կը չիմէի , դպրոցին մէջ գրած ոտանաւորներուս պատրաստ եղանակներ յարմարցնելով . տեսայ որ գօլճի մը իր 8—10 ընկերներով ետեւէս ինկած է , մէկ նշանիս վրայ ձիս իսկիմը թող տըլաւ , արտերու մէջէն ձիովս կը թռչէի , քաղաք հասնելու ժամ մը մնացած էր . լուսնի լուսով հեռուէն կը տեսնէի գերեզմաննոցի ճերմակ քարերը . գօլճիներուն ձեռքը չիւնալուս վստահ էի , շատ ճամբայ չահած էի , հանդարտ սրտով գերեզմաննոցին կողմը նայեցայ , երանի տալով հոն պառկողներուն , և մտքէս անցնելով այնպիսի բաներ , որոնք անպատճառ կ'անցնին՝ գերեզման տեսնող զգայուն մարդուն մտքէն : Յանկարծ ինչ տեսնեմ . քարի մը տակէ ճերմակ պատանքով մեռել մը ելաւ , կը բալէ կոր . կայծակի արագութեամբ յիշեցի որ , ես լուսաւորեալ եմ , անկարելի է այս , կամ ճերմակ լաթով կենդանի մարդ մ'է և կամ ճերմակ անտուն մը . այս մտածումս չի լրացած , երկրորդ մը եւս ելաւ , երրորդ մ'ալ ետեւէն , մտածումս պաշտօնական հանգամանք մը առաւ , խորհեցայ թէ մեռելներուն գիշերուան մէջ ելնել պտտիլը լսած եմ , բայց առաւաղելներ են անոնք , այս տեսածներ ի՞նչ են որ կը քալեն , հիմա՛ նախապաշտմ' մը անալիզ կ'ընեմ ըսելով ատրճանակս քաշեցի : Յանկարծ միտքս ինկաւ , գնտալը մինչեւ հոն չ'պիտի հասնի , ձին տեւիլի քշեցի , ի՞նչ տեսնեմ . չորրորդ մը , հինգերորդ , իրարու ետեւէ , տանը անցաւ , այլ եւս չը համբուր , ամենն ալ քարերուն տակէն , հողերուն տակէն կ'ելնեն , հողաբարտ քայլերով քաղաքին ճամբան կը մտնեն , ճերմակ բանակ մը կ'երթայ կոր առջեւէս , թեթեւ վախ մը զգացի , կը տեսնեմ որ ամենքն ալ ճերմակ պատանքով , մէջերնին գերը կայ , նիհարը կայ , մեծեր կան , փոքրիկ տղաքնեք կան , մէյով դադար առնելով վեր վեր

կը ցատկեն , նորէն միօրինակ քալելու կը սկսին . աւելի մօտեցաւ ձիս , ջիղերուս հրաման ըրի որ չ'թուլնան , չեմ վախնար կ'երեւայ ինծի , բայց սրտիս բարախիլը կ'զգամ , գլխիս տաքութիւն մը իջաւ , ուժս չ'կորսնցնեմ կ'ըսեմ , թուլութիւնս կը շատնայ . վերջապէս համոզուեցայ որ վախնալ պէտք է , ձիս գլուխը դարձուցի ետ , դասալիք գինւորի պէս . բայց գօլճիները , ա՛հ , ատոնք մուցեր էի շուարսումիս մէջ , կեցայ , ո՞ր կողմը երթամ , փախչելու ճամբայ մը չի կայ , ինքնիրենս որոշումդ տո՛ւր կ'ըսեմ — ինչ ընեմ Տէր Աստուած , լուսինն ալ այդ մ'ջոցին ամպի մը ետեւ պահուեցաւ , կարծես թէ չէր բարեհաճէր ինծի խրատ մը տալու , ի պատիժ ինծի , որ միայն ճգնաժամի մէջ զԱստուած կը յիշեմ : Է՛ , չո՛ւտ , որոշում , գօլճիները հիմա կը հասնին : Պաղքրտինք մը կ'զգամ ճակտիս վրայ , այնչափ շուարեր եմ որ այդ սուղ ժամանակէն վարկեան մը կը զոհեմ կոր , գրպանէս թաշկի-նակս հանելու համար , ձեռքս կարծր բանի մը դադաւ . ա՛հ , մուցեր էի , չորրորդ անբաժան ընկերս , օղիիս շիշը , Տէրը լուսաւորէ այս ըմպելիքը հնարողին հոգին , շիշը դրի բերնիս , վարի կողմը տնկեցի դէպ ի երկնք , ըստ սովորութեանս , կո՛ւռթ , կո՛ւռթ , կլլեցի այնչափ՝ որչափով որ մարդաբնիւ մը կ'ըլլամ , մտրմինս մարտկոցի մը փոխուեցաւ , դիւցազնական ուժ մը զգացի . յստակ մտքով խորհեցայ , որոշումը տրուած է , ձիս դարձուցի , մեռելներուն կողմը , անոնք թերեւս գօլճիներէն աւելի վախկոտ կամ անփոստ կ'ըլլան : Փամանակ կորսնցուցեր էի , գօլճիները բաւական մօտեցած ըլլալու են . ձիս կը վազէ . դարձեալ կը տեսնեմ ճերմակ ամբողջ , լռիկ մընջիկ են , երբեմն կանգ կ'առնեն վեր վեր ցատկելու համար , արա՛գ արա՛գ կը քալեն . կը խորհիմ թէ յարձակումս գէնքո՞վս թէ սպառնական ձայնովս սկսիմ , որոշումը չի տուած ձայն մը թռաւ բերնէս , բարձրագոյն ատրճանէն , էօյէէօյէօյ . . . Թուժո՛ւն շուճալը , զարմանալի բան , ձայնս իր անտառային Նօթայովը մեծ ազդեցութիւն ըրաւ , վազել սկսան , մէկը կ'իյնայ , միւրը կը վերցնէ , մեծ մը կ'իյնայ , երկու տղաք կը վերցնեն , կը վազեն ու կը վազեն . անոնց

նպատակը ինծի վնասել չէ, աւելի կը սրտոտիմ, բայց ի՞նչ պիտի ընեն այս մեռելները, արդեօք արչաւա՞նք մը կազմակերպած են բժիշկներուն համար, անտարակոյս և իրաւունք ունին. աւելի մօտեցած եմ, երկրորդ սպառնալիք մը եւս, Եօ՛յ, Թուծուն շունլարը. աւելի շուտ վազել սկսան, քաղաքին առաջին փողոցը մտան, վարկեան մը պէտք է իրենց հասնելու, գօճիներեն այլեւս վախ չունիմ, անոնք չեն կրնար հասնիլ, սա վախկոտ մեռելներուն հաշիւը սովորիմ, օ՛ն, յառաջ, վարկեանը լրացաւ, հասայ, աւելի յարմար սեպեցի խոշոր եաթաղանովս յարձակիլ, մէկ ձեռքս ալ ատրճանակս պատրաստ ունենալով. լուսինը քնացած էր այլեւս, եաթաղանս օդին բարձրացնելով՝ ահա՛, պոռացի, երկու քայլ եւս, պիտի լջեցնեմ իրենց գլխին. Յանկարծ բոլոր մեռելները գետին ինկան, կարգով պառկեցան, ձիս կանգ առաւ, առաջ չ'երթար, ա՛յս ինչ է, սոսկում մը եկաւ վրաս, ձիին կը դարնեմ, չ'երթար, չ'րթունքներս դողալ սկսան, ձեռքերս թուլցան, եաթաղանս վար իջաւ, քիչ մնաց ձիէն պիտի իյնամ. մէկէն ի մէկ քունէ արթնցողի մը պէս վեր նետուեցայ, մութին մէջէն ձայներ, ձայները ծանօթ են, առջեւս են, զիս չըջապատած են, ձայները աղաչական են, «Աման մեղայ Թերուս էֆէնտի, խնայէ՛ մեզի, աման Թերուս էֆէնտի, խնայէ մեզի», աչքերս լարեցի, մութին չեմ ճանչնար դէմքերին, Եւրոպական զգեստ հագած մարդիկ են, գլուխին ֆէսով, մեռելները անդին պառկած են գետնին վրայ. անոնց չափ ալ ասոնք են. վախնալ չ'մնացուցի իրենց, հրամայական ձայնով մը հարցուցի, «Ո՞վ էք դուք որ զիս կը ճանչնաք»:

Մէկը որ ձիին գլուխէն բռնած էր, պատասխանեց.

— Մենք զձեզ կը ճանչնանք իբր անկեղծ և զգայուն մարդ. ձիին արագ վազքէն իմացանք որ դուք էք, դուք ալ զմեզ կը ճանչնաք, չ'կրցանք փախչիլ, բայց ձեզի վնաս մը չ'ունենալէ զատ մեր ձեռքէն եկածը ընող եմք ձեզի համար, մենք ամենքս ալ դասատուներ ենք, որ այս քաղաքին աներեւոյթ գողերը եղած ենք, բայց անմեղ ենք:

— Դո՞ւք էիք առջեւէս փախչողը:

— Այո՛, և մեծ վախով:

— Ըսել է այդ մեռելները դուք հանեցիք գերեզմանէն, ի՞նչ ընելու համար կամ ի՞նչ շահու համար մեռել կը գողնաք:

— Էֆէնտիմ, ատոնք մեռել չեն, մեր տոպրակներն են:

— Ի՞նչ կը պարունակեն:

— Ճշմարտութիւնը չ'խոստովանիլ չըլար, Թերուս էֆէնտի. գերեզմանոցին մէջ ագգին հաշույն Թօփ ածամ գալուսի սերմեր կը ցանեն ծնողքները, ապրելու համար ստիպուած ենք այդ սերմերը շահագործելու, տհաս վիճակի մէջ, մութին մէջ փրճնելով հրապարակին վրայ աժան սեխ կը լեցնենք, տհաս են, բայց գոյներնին գեղեցիկ է քանարեաներու նման:

— Այդ տոպրակները դո՞ւք չինա՞ծ էք:

— Ո՛չ, Պօլիսէն մեզի կը զրկուին հաւասար մեծութեամբ, սակայն մեր մէջի ուժովները, կտոր կարելով կը մեծցնեն:

Թովմաս առաքեալի սկզբունքով ձիէս իջայ և տոպրակները զննեցի, տեսայ որ մեռել չեն, սեխի հակեր են մեծ ու փոքր. ճամբան վեր վար ցատկելնուն պատճառը հասկցայ առանց հարցնելու, վազողին բեռը ծանր ըլլալով կռնակէն վար կը սահի և վազողը կ'ստիպուի երբեմն կանգ առնելով՝ բեռը վեր նետել, և ուսին վրայ տեղաւորել:

Բարիզի 1900ի էքսփօզիցիոնէն վերադարձողի տպաւորութեան տակ, անհոգ եղիք ըսելով ձիին վրայ նետուեցայ, քշեցի դէպ ի տուն, ծխախոտի երկու հակերս գաղտնի ներքնասենեկիս մէջ պահելով, ձիս քաշեցի աստուր, յայտնի եղաւ որ ձիս մեռելներէն շատ վախեցեր էր, խենդի պէս պատէպատ զարնուիլ սկսաւ, աստուիս ներսի կողմի պտրտէզին պատը փաւ, տեղի տալով ձիին ընդհարմանը. աստուր և պարտէզը միացած եղան: արշալոյսը ծագելու վրայ էր: Զին խենդութիւնը անցաւ, պատը փլչելով պարտէզին հովը ներս մտաւ, ձին օդափոխութենէն բաւական կաղբուրուեցաւ, կերին տոպրակը վիզը անցուցի, սկսաւ ուտել:

Յանկարծ ձին խրխնջաց, քունէս արթնցայ, տեսայ որ անկողնիս մէջն եմ, քրտնած եմ, պատուհանս հովէն բացուեր է, պաղեր եմ. հէփշու, հարբուխի բռնուեր եմ, քու-

վերջի գործողութիւնը կը կատարուի միշտ խորխացումէն անմիջապէս վերջը :

Երբ կը տեսնէք թէ թրթուրներէն ումանք սկսած են քրդէն քնանալ . նախորդ անգամուն պէս հետզհետէ ճաշերնին թեթեւցնելով բոլորովին կտրելու է , երբ անոնցմէ ումանք արթնութեան նշաններ ցոյց տան :

Երկրորդ խորխացումը լրացնող թրթուրներուն մարթը սպիտակ և փայլուն կ'ըլլայ . գլուխին ամփոփ և բարձրադիր , դունչերնին ժողոված սեւ և երկար :

Այս երկրորդ շրջանն ալ կը տեսնէ 5—6 օր , և այդ ժամանակամիջոցին մէջ 25 կուամ հունտէն արտադրած որդերը կ'ուտեն 25—30 քիլօ տերեւ : Եթէ այս շրջանին մէջ երկու անկողնոյ փոփոխում կատարէք , երկրորդը պէտք է տեղի ունենայ 4-րդ օրը . ըսելէ առաջին անկողնոյ փոփոխումէն 3 օր վերջը :

Ջերմաչափը պէտք է նշանակէ այս շրջանին մէջ 20⁰ հարիւրորդ ճաշի ատեն , և 19⁰ ալ պարապոյ ժամերուն մէջ :

Սոնաւաչափն ալ պէտք է նշանակէ 70—80 :

Երկրորդ շրջան . — Թրթուրները արթնցած ատեննին իրենց մարմինը գորշ և բերանին լայն և շագանակի գոյն մը կ'ստանայ . 24—36 ժամ պէտք է առանց ճաշ տալու անցնել , որպէս զի ետ մնացողներն ալ արթննալով միւսներուն հասնին . այն ատեն անկողինները փոխելու համար ծակոտիէն թուղթերը դնելու է . նախ թեթեւ ճաշ մը , և յետոյ աւելի առատ տալով անկողինները փոխելու է : Այս շրջանին մէջ թրթուրները երկու անգամ աւելի մեծցած ըլլալով , պէտք է սեղանները կրկնապատկել . այսինքն մէկ սեղանի վրայ գտնուած թրթուրները երկու սեղանի վրայ բաժնել . ահաւասիկ թէ ինչպէս : Նոր սեղաններուն վրայ դրէք ծակոտիէն թուղթերը իրենց երկայնութեան և մէկզմէկէ 4—5 հար . մեթր հեռաւորութեամբ : Տերեւները հաւասարապէս սեղանին ամեն կողմը տարածուելով , թուղթերուն մէջ պարապ մնացած տեղն ալ հետզհետէ թրթուրներով կը ծածկուի :

Հին անկողինին վրայ մնացած թրթուրները պէտք է ժողվել և հեռացնել շերամատունէն . կամ եթէ կը յուսաք թէ անոնցմէ որմանք առանց հիւանդութեան պիտի ապրին ,

զատ սեղանի մը վրայ կը պահէք զանոնք : Անկողիններն ալ պէտք է շերամատունէն դուրս նետել առանց փոշի հանելու :

Երեք ժամ ճաշ կը տրուի , բայց եթէ չորս անգամ կարենաք տալ , աւելի աղէկ կ'ըլլայ . որով թրթուրները քիչ ատեն անօթի մնալով , աւելի շուտ կ'ուժովնան և կը մեծնան : Եթէ այս դրութիւնը ընդունիք , այսինքն 4 անգամ ճաշ տալու դրութիւնը , պէտք է մինչեւ վերջը այնպէս շարունակել : Ումանք երբ ժամանակ սենեան և ճաշ կուտան , և երբ չի հասնին , 3 անգամ կը բաժնեն ճաշը : Գէշ դրութիւն մ'է . այս . որովհետեւ շերամաբուծութեան մէջ ամեն բանէ առաջ կարգապահութիւն պէտք է , թէ տրուած ճաշի ժամանակին . քանակին ինչպէս և տաքութեան աստիճանին մէջ : Զի մուսանք սակայն ըսելու թէ , ճաշը 4 անգամ տրուած ատեն , միշտ թեթեւ , այսինքն քիչ քիչ տալու է :

Այս երրորդ շրջանէն սկսեալ . այլեւս տերեւները առանց ճիւղերէն փրցնելու կրնաք տալ . որովհետեւ թրթուրները բաւական մեծցած ըլլալով , և իրենց կերած սնունդը շատ ջուր պարունակելուն համար իր մէջ , բուծարաններուն շուրջը խոնաւութիւնը կը շատնայ , թէ իրենց մարմնոյն արտաշնչումէն չոգիացած ջրերով , և թէ նոյն իսկ տերեւներուն մէջ պարունակուած ջուրին չոգիացումէն , որ կրնայ թրթուրներուն առողջութիւնը վտանգել : Այս պատճառաւ ահա , տերեւները իրենց ճիւղերուն վրայ երրորդ թուղթ , օդը անոնց մէջերէն անցնելով , շարունակ խոնաւութեան մէկ մասը կ'առնէ հետը կը տանի . և երբ կը տեսնաք թէ , այս միջոցն ալ անբաւական է խոնաւութեան աստիճանը իջեցնելու , որ կրնայ մինչեւ 100ի բարձրանալ եթէ անզգոյշ գտնուիք . այն ատեն յաճախ անոնց անկողինները փոխելու և , օդը շարունակ վերանորոգելու է յարմարաբոյն տաքութիւն մը պահելով հանդերձ շերամատան մէջ :

Իւրաքանչիւր ճաշէն անմիջապէս վերջը բոցարձակ կրակ շինելու է , և օդը որչափ խոնաւ և ծանր ըլլայ , կրակը այն չափ յաճախակի կրկնելու է : Մերթ ընդ մերթ կրի քլորուելով (քիւրէն գայմաղը) խառն ջրով գետինը ջրելու է , և շերամատան անկիւններն

ալ մէյմէկ պնակ լեցուն այդ նիւթէն միշտ գտնուելու է, որպէսզի չարունակ թրթուրները մաքուր և հականեխուած օգով մը չըջապտուած գտնուին: Գետինը մաքրելու համար պէտք է խոնաւ լաթով մը սրբել. առանց աւելլու. որ փոշի չ'ելլայ:

Եօթը ութը օր կը տեւէ այս երրորդ շրջանը, և մէկ տուփէն եղած թրթուրները 80 քիլօի չափ տեբեւ կ'սպառեն:

Վեցերորդ օրէն սկսեալ, թրթուրները հետզհետէ կը քնանան, սրով և ճաշերին ալ թեթեւցնելու է: Քնանալէ առաջ եթէ կարողանաք անկողինը փոխել (5րդ օրը) շատ աղէկ կ'ըլլայ:

Շերամատան տաքութիւնը աստիճան մը եւս աւելցնելու է երրորդ շրջանին մէջ. այսինքն, ջերամաշափը նշանակելու է 22⁰ հարիւրարդ ճաշերու տեւողութեան կամ որ նոյնն է արթնութեան ժամանակ, իսկ երբ ուտելէ կը դադրին և իրենց խորխացումին մէջ են, այն ատեն պէտք է նշանակէ 21⁰ հարիւրարդ: Խոնաւաշափը նշանակելու է միշտ 70—80⁰ հարիւրարդ:

(Շարունակելի)

Դ. ԲՈԼՍ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐՈՒՆ ԵՒ ԳԻՒՂԱՑԻՆԵՐՈՒՆ ԱՌՀԱՍՍՐԱԿ



ՄՈՒԿԵՐԸ ՈՉՆՉԱՅՆԵԼՈՒ ՄԻՋՈՅՆԵՐ

Պատասխան քիւ 12 հարցման

Քաղաքէն մինչեւ գիւղ, լեռներէն մինչեւ ծով, ուր որ մարդ կը բնակի և կ'ապրի, այդ չարաճճի չորքոտանին աներես յամառութիւնով մը կ'ընկերանայ անոր գաղտնաբար, անոր ճակտի քրտինքով չահած ապրուստը կ'ապուստը անիրաւաբար բաժնելու: Ի՛նչ, եթէ իր բաժինը առնէ և կորսուի երթայ, նորէն մարդ կը հանգուրժէ անոր. բայց եկու տես որ այնպէս չէ. ուտելիք մը գտա՞ն իր տրամադրութեան տակ, իսկ փորը կը կշտացնէ անհոգութեամբ, յետոյ կ'աղտոտէ և կ'աւրէ զայն վատութեամբ. ուտելիք չի գտա՞ն, և ընդհանրապէս ծնըն-

դաբերութեան ժամանակները իր բոյնը չի նեղու համար. ինչ որ գտնայ կը կրծէ, կը ջարդէ և կ'ոչնչացնէ: Տանդ մէջ ես, դաւաններնուդ, պահարաններնուդ անկիւնները մուկի անհաճոյ ծակերով լեցուած են, ոչ միայն փայտաշէն, այլ և քարուկի պատերն անգամ փորել և ծակելու չի քաշուիր իր տաղտկացուցիչ դըրտ դըրտներով: Շուկան խանութ ունիս, հոն ալ ընկերացած է քեզի. Գիւղացի՞ ես, մի վախնար, շտեմարանիդ առաջնակարգ յաճախորդը կըլլայ ան, որ սակայն ոչ կանխիկ կը վճարէ, և ոչ ալ պօսօ կ'ընդունի. և շատ անգամ, շտեմարանէդ առաջ արտերուդ մէջ տոյճատիճան աշխուժութիւն մը կը ցուցնէ որ, բերքերնուդ մեծամասնութիւնը շտեմարան կրելու հոգէն կ'ազատէ զքեզ: Հսուած է շատ անգամներ որ, երբեմն տարիներ եղած են, յորում մուկերը անհամար բազմութիւնով դաշտերը ասպատակած և տարւոյն ամբողջ բերքերը ոչնչացւցած են:

Ապերախտ մ'է այդ կենդանին, և իր ապերախտութիւնը այն աստիճան առաջ կը տանի որ, եթէ երբէք գաղտագողի մտած մէկ սենեկին մէջ ուտելիք չի գտնէ, և դուք ալ հոն պառկած և խոր քնոյ մէջ գտնուիք, անանկ ճարտարութեամբ մարմնոյդ մէկ կողմը կը կրծէ որ անուշ քունիկներնուդ մէջ հազիւ թէ մուկի մը կամ լուի մը խայթումաքին չափ ազդեցութիւն կ'ընէ, և երբ յանկարծ անոր աղաւաններու խտխտումէն վրդոված արթննաք. այն ատեն կ'զգաք ցաւը և կը տեսնէք բացուած վէրքը, բայց անիկա շատոնց կծիկը դրած է: Այնչափ ալ խելացի է որ, լարուած ծուղակներուն մէջ իյնալու համար, կամ շատ անօթի ըլլալով ուրիշ ուտելիք գտնելու չէ, կամ իր ամենէն աւելի սիրած մէկ ուտելիքը ըլլալու է, և կամ աչազուրկ ըլլալու է: Շատ տեսակ ծուղակներ հնարուած են մուկերը բռնելու համար. իրաւ է թէ անոնք օգտակար կրնան ըլլալ շատ պարագաներու մէջ, ընդհանրապէս անբաւական և անյոյժ միջոցներ են: Երբ ծուղակի մը մէջ մուկ մը բռնուի, փորձած ըլլալու էք անշուշտ որ, անոր մէջ գարշաբոյր հոտ մը կը թողու, և այդ հոտը առնող ուրիշ մուկեր հասկնալով թէ իրենց մէջէն անյայտացած մէկ ընկերը հոն բըռ-

նուած, և մարդկային վրիժառութեան զոհ դացած է, հեռու հեռու կը փախին անկէ: Ուստի՝ երբ այս տեսակ ծուղակներ գործածէք, մուկը բռնելէդ և զայն ոչնչացնելէդ վերջը, ծուղակը խնամով լուացէք տաք և օճառ ջրով, կամ սօտաջրով: Որպէս զի՝ հոտը անհետացնելով յայտնի չ'ընէք ուրիշ մուկերու: Եւ երբ տեղ մը ծուղակ մը կը դնէք, զգուշութեամբ վերուցէք ամեն կարգի ուտելիք, որպէս զի մուկը պարտաւորի ստիպմամբ փորձել այդ ծուղակէն ներս մտնելու: Իր բացած ծակին շատ մօտ մի դնէք, որովհետեւ անիկա անմիջապէս կը հասկնայ և չի մօտենար անոր:

Կատունները սքանչելի մկնորսներ են, բայց անոնք ալ փորերնին կշտայնեւնող պէս, տաքուկ տեղ մը կը փնտռեն ծուղակեամբ խուկալու, կամ վառարանին քովին է պառկած, կռնակն ալ այրի, հոգը չ'ընէր — կամ բազմոցին անկիւնը, և կամ եթէ պզտիկուց քիչ մը շփացուցած էք, գիրկերնուդ վար չ'ըջնար: Գողութեան մասին ալ, եթէ պատուանշան տալ հարկ ըլլար, առաջինին արժանի է. տանդ մէջ մուկերէն աւելի կատունն պահպանելու ես ուտելիքներդ, սատարներութեամբ որ, առաջինները ամենակեր են, մինչդեռ միւսը մնակեր: Եթէ պարտէզիդ մէջ նորածին վառեակներ ունիս, դարանակալ կ'ըլլայ անոնց, և անպատճառ միտքը կը դնէ անոնցմէ մէկ քանին ճաշակել: Կը տեսնէ՞ք որ աստիճան ապերախտ է աս ալ: Բայց ի՞նչ ընենք, ստիպմամբ պէտք է մեր բնակութեանց. մէջ, ունենանք 1—2 հատ, գէթ անոր հոտէն մուկերը կը քաշուին:

Տեսակ մը շուն կայ, զոր ֆօանսայիք Թեռլէ կը կոչեն, — Ղալաթիա Մալթըզ փողոցը շատ կայ անոնցմէ — և կատունէն աւելի տղէկ մուկ կ'որսայ, և հաւատարիմ ալ է:

Տուներու խանութներու համոր եթէ օգտակար միջոց մը կայ առաջարկելիք, սա հետեւեալն է.

Դարաններնիդ կամ պահարաններնիդ, մէջի կամ դրսի կողմէն ըստ յարմարութեան, զինկօ դրուագեցէք (գափլամագ). և եթէ կուզէք՝ վրայէն ալ նկարուն թուղթ փակցուցէք: Այս կերպով վերջնականապէս և վստահօրէն ազատած կ'ըլլաք ձեր ինչքերը

մուկերու աւերումներէն. որովհետեւ ուրիշ ինչ միջոցով ալ ոչնչացունէք ձեր բնակարանը գտնուած մուկերը. ժամանակ մը վերջը դրացւոյդ տունէն, կամ ուրիշ տեղէ դուրս, կրկին ձեր գլխուն վրայ առաստաղներուն մէջ, ուրիշ նորեր բնակութիւն պիտի հաստատեն. և դուք կարծելով որ ձեր տունը մուկերէ ազատած է այլ եւս, յանկարծ պիտի տեսնէք թէ, ձեր ամենէն պէտքի մէկ ինչը մուկերը կտրտեր են: Մուկը զինկօն չի կրնար կրծել, հետեւաբար ամենէն ազդու միջոցն է. բայց եթէ առարկէք թէ բաւական ծախք մը ընելու պիտի ստիպուիք, յիշեցէք թէ մէկ անգամի համար է այդ ծախքը. մինչդեռ մուկերը ամեն օր իրենց վրասներով ձեզի այդ ծախքին 10նասպառիկը ընել կուտան: Բայց կրնաք ծախքը թեթեւցնելու համար, երկաթէ բարակ թիթեղ (սաճ) գործածել. որուն օխտն վերի վերոյ 60 փարայ է. կրնաք նաեւ կազի թենէքէ ալ գործածել: Այս առաջարկածներս անշուշտ նոր բաներ չ'են, բայց ամեղէն ապահով միջոցը ըլլալուն համար, չ'ուզեցի զանց առնել: Նպարավաճառները իրենց ապրանքները մուկերէ ազատելու համար. կրնան զինկօյ մեծիկ ամաններ գործածել, և անոնց բերաններն ալ Թեղ գափէսէ կամ աղակիէ կափարիչով մը գոցել. որով վերջնականապէս մուկերէն կ'ազատին, ըստինքն ապակեդարանի (ճամբեան) վերածելու է և այնպէս զինկօյով դրուագելու և վրայէն ալ թուղթ փակցնելու է:

Խօսինք հիմա ալ կարդ մը մկնասպան դեղերու վրայ, որոնց մէջէն ձեր գործին յարմարածը կ'որոշէք և կը գործածէք: Մկնասպան դեղերուն մէջ առաջնակարգ տեղը կը բռնէ արսէնիքը (մկնդեղ, սրչան օմը), անունէն յայտնի է, բայց սարսափելի թոյն մ'է, անոր համար մեծ զգուշութեամբ գործածելու է. Ահաւասիկ թէ ի՞նչպէս կը պատրաստեն զայն:

Առէք հացի փոր, որ ոչ թարմ ըլլայ և ոչ ալ օթեկ, քիչ մը շաքարջրով կամ բէրմէզով աղէկ մը թրեցէք. յետոյ խառնեցէք հետը շատ քիչ քանակութեամբ հալած դմակիւղ կամ ճարպ, որն որ յարմար է ձեզի. հիմա այսպէս շաղուած հացի փորին 100 կըռամին 8—10 կռամ հաշով փոշիացած ար-

սենիք դրէք և աղէկ մը կրկին թրեկով իրար խառնեցէք. բաժնեցէք զայն մանր հատիկներու, տարբեր ձեւերով. երկայն, կլոր, տափակ եւ այլն. — հատիկները սիսեռի չափ ըլլալու են — դրէք զանոնք ամանի մը մէջ, և վրան քիչ մը ալիւր ցանկելով, ամանը չարժեցէք, որպէս զի՝ ալիւրը հատիկներուն ամէն կողմը հաւասարապէս տարածուի. յետոյ զանոնք փոքրիկ պնակներու մէջ բաժնեցէք. — զոր օրինակ, սուրճի պնակ և կամ խաւաքարտէ (մուգավա), թիթեղէ փոքր տուփերու մէջ, որոնց եզերքը 4 սանիմի չափ բարձր ըլլայ, որ մուկը գիւրու թեամբ կարողանայ ուտելու և միտքերնիդ պահեցէք քանի հատ գնկնիդ. այդ ամանները չարեցէք մուկերուն յաճախած տեղերը. բայց ուշադրութիւն ընելու է որ, վրան բաց տակիք չի գտնուի, որովհետեւ կրնայ ըլլալ որ՝ մուկը այդ գեղաշատերը իր բոյնը տանիլ փորձէ, և ճամբան հանդիպած կերակուրին մէջ ձգէ:

ԿԱՐԵՒՈՐ ԶԵՎՈՅՑ. — Երբ այս եւ ասոր նման թունաւոր նիւթերով մուկերու կամ ուրիշ կենդանիներու կեր պատրաստէք, նախ եւ առաջ պէտք է եղունքներնիդ կտրած ըլլայ, պատրաստութիւնը լրանալէն վերջն ալ անոնգ գտնուելու չէ, տաք սօտաջուրով, օճառով կրկին եւ կրկին անգամ լուացուելու է, ինչպէս եւ գործածուած ամանները:

Դաշտերու մուկերը ոչնչացնելու համար Եւրոպայի մէջ հետեւեալ եղանակը կը գործածեն:

10 քիւօ ցորեն, մարացորեն կամ սիսեռ եւայլն, 8—10 ժամու չափ պէտք է թրջող դնել շաքարձուր կամ բէքմէզուրի մէջ (եթէ շաքար խառնէք ջուրին, 100ին 3 կը բաւէ, իսկ եթէ բէքմէզ, 100ին 6, այսինքն 10 լիթրա ջուրին 600 կաւով *): Թրջոցն հանելով տարածելու է տեղ մը, սր չորնալով վրան դնուած շաքարը կամ բէքմէզը ստինձի պէս ձեռքիդ կալչի բռնած ատենդ:

(*) Սնցեպնէր հարցնող եղաւ քէ՝ լիթրան որչափ է, որովհետեւ օտեք չեն գիտեր, յարմար դասեցինք Եւրոպական իմացնել, քէ լիթրան չափ մէ՞ որ հեղուկներուն համար կը գործածուի, ինչպէս կար, իդ, ջուր եւ այլն. չափելու համար, 1 լիթր ջուրը հաշուար է 1 լիթր կարք աւելի ծանր է, իսկ խոյր աւելի քերէ:

այն ատեն 30—50 կաւով փոշիոցած արսենիք ցանեցէք հատիկներուն վրայ, և շարունակ տակնուվրայ ըրէք, որ ամենքն ալ հաւասարապէս ծածկուին անով, յետոյ 600 կաւով չափ ալիւր ցանկելով նորէն տակնուվրայ ըրէք:

Ահաւասիկ թէ ինչպէս գործածելու է այս մկնասպան դեղը: Առջի գիշերուընէ պտուեցէք արտին մէջ, և աղէկ ուշադրութիւն ըրէք, ուր որ մուկի ծակ գտնաք, վրան հողի կոշտ մը դնելով և սաքերնուդ կառն. կով ալ զարնելով դոցեցէք. հետեւեալ առաւօտուն առէք հետերնիդ ըստ բաւականի թունաւոր հատիկներէն. — Աւելի աղէկ է զանոնք թիթեղէ տուփի մէջ դնել. — Եւ արտին մէջ նայեցէ՛ի ուր նոր բացուած ծակեր կան. — Մուկերը ընդհանրապէս գիշերները իրենց կողպուտը ի գործ կը դնեն. — Եթէ ցորեն պատրաստէք 10նիչափ, իսկ եթէ մարացորէն կամ սիսեռ՝ 4—5 հատ խրաքան. չիւր ծակին մէջ նետեցէք և նորէն ծակը գոցեցէք վերը ըսուածին պէս: Այս գործողութիւնը կատարելու համար աւելի աղէկ է, մէկը հատիկները լեցնէ, և ուրիշ մ'ալ ծակերը գոցէ. և երկրորդ՝ երբէք ձեռքով չի բռնել հատիկները, այլ հին փայտէ կամ երկաթէ դգալ մը գործածել: Եւրոպայի մէջ մասնաւոր գործիք մը կայ, անով ծակերը կը լեցնեն թունաւոր հատիկները: Անգգուշութեամբ չ'ըլլայ որ հողին երեսը ցանէք կամ թողուք:

Ահաւասիկ այս միջոցով ապահով կ'ըլլաք թէ ձեր արտին մէջէն մուկերը պիտի ոչնչանան. և ձեր աշխատութեան ալ բաժնեկից չըսլիտի ըլլան. ծախքերնիդ ալ մեծ բան մը չ'է. իւրաքանչիւր արտավարի համար հողիւ թէ 20՝ սուառաւելն 30 փարայի կը հասնի:

Տուններու, խանութներու և շտեմարաններու համար ուրիշ միջոցներ:

Պզտիկ պնակներու մէջ լեցուցէք գաճ (ալջը), վրան բորակ խաւ մը ալիւր ցանեցէք և տեղ տեղ դրէք զանոնք: Նոյնպէս ուրիշ յարմար ամաններու մէջ ալ. մօտիկը դրէք սարդ ջուր. մուկը ալիւր կերած ատեն, հետը մէկտեղ գաճն ալ կ'ուտէ. և երբ գաճը ստամոքսը երթայ, կ'սկսի այրիլ և ջուր փնտռել. երբ ջուրը գտնայ կը լամէ:

անշուշտ, բայց գիտէ՞ք ինչ կ'ըլլայ. գաճը ստամոքսին մէջ կը կազապարի. կ'ուռեցնէ մուկը, որ եթէ շատ կերած է կը պայթի:

Երկրորդ՝ առէ՛ք սպունգի կտոր մը. զայն փոքր մասերու բաժնեցէ՛ք կաղինի հատի կլորութեամբ, և տապկեցէ՛ք իւղի մէջ, պաղելէն վերջը դրէ՛ք պնակներու մէջ և հրամցուցէ՛ք ձեր անհաճոյ հիւրերուն. — Մուկերուն ըսել կ'ուզեմ, սխալ չի հասկնա՞ք. — Սպունգը անմարսելի ըլլալով, ուտելէն վերջը անպատճառ ջուր պիտի խմէ վրայէն ալ. որ ստամոքսին մէջ կ'ուռի, և միեւնոյն հետեւանքը կ'ուռնայ դաճին պէս:

Երրորդ միջոց մ'ալ կը յանձնարարէ Անգլիացի երկրագործ մը:

Այս մարդը ինչ որ ըրեր է, մուկերէն չէ կրցած իր օձիքը ազատել, օր մը շտեմարան ելած ատեն, ձեռքը սղփակ տրճակ (տէմէտ) մը անանուխ (նանէ) կայ եղեր, զոր կը դնէ ցորենի պարկի մը վրայ. շտեմարանէն դուրս ելած ատեն անանուխը հոն կը մոռնայ, մէկ քանի օր վերջը երբ կրկին շտեմարան կ'ելլայ, կը տեսնէ որ բոլոր ցորենի պարկերը ծակկեր են մուկերը, բաց ի այն պարկէն, որուն վրայ անանուխը դրած էր. այս անգամ Անգլիացին կերթոյ շատ մը անանուխ կը ժողվէ և շտեմարանին ամեն կողմը կը դնէ. և ամեն օր շարունակ շտեմարան ելլալով կը տեսնէ թէ այլեւս մուկերը հոն ոտք չեն կոխեր: Իր այս դիպուածական փորձէն զոհ, ալ շտեմարանէն անպակաս կընէ անանուխը, և կըսէ թէ 10 տարիներէ ի վեր շտեմարանին մէջ մուկ մը անգամ տեսած չէ: Կարելի է գործածել նաեւ, փոխանակ անանուխի, իր խկութիւնը, այսինքն նանէ եաղի ըստածը, որ քուրջի կամ բամպակի կտորներու վրայ լեցնելով մէկ երկու կաթիլ, հոս հոն կը դնէք, անոր հոտէն մուկը չի մօտենար. բայց անշուշտ մերթ ընդ մերթ նանէ եաղին նորէն դնելու է, որ հոտը անպակաս ըլլայ:

Հոտ իս՝ հիմա այս վերջի միջոցը տուներու համար ամենէն լաւագոյնն է, եթէ իրօք մուկերը չ'են ախորժիր այդ հոտէն. որովհետեւ ձիւս նախորդ միջոցները թէ վտանգաւոր են և թէ, մուկը զանոնք ուտելով պիտի երթայ կամ տանը մէկ անտեսանելի անկիւնը և կամ առաստաղներուն մէջ սատ-

կի, ալ անկէ ետքն ալ բան չ'ուռնիս նէ այդ գարշելի հոտը մտիկ ըրէ:

Լ. ԲՈԼՍ

ԽՈՋԱՆՈՑԻ ԲԱԺԻՆԸ

ԵԼԱԿԻ ԱՆՈՒՇ

Ելալի անուշի պատրաստութիւնը բացատրելէ առաջ, պիտի պարտաւորինք նախ՝ շարժի պատրաստութեան վրայ խօսիլ:

Հաւկթի մը ճերմկուցը դրէք ամանի մը մէջ և վրան աւելցուցէ՛ք քիչ մը ջուր, փայտէ դգալով լաւ մը զարկէ՛ք. երբ ճերմկնայ, շարունակ խառնելով՝ աւելցուցէ՛ք վրան դաւաթ մը պաղ ջուր:

Ծանի մը մէջ դրէ՛ք 4 քիլօ շաքար (աւելի կամ քիչ պատրաստել ուղած ատեննիդ, չափերը նոյն համեմատութեամբ հաւասարցուցէ՛ք) և 1/2 լիթրա (1/2 քիլօ ըսել է) ջուրի մէջ հալեցուցէ՛ք, ու վերոյիշեալ հաւկթի ճերմկուցով խառնուած ջուրին կէսը վրան աւելցուցէ՛ք. յետոյ դրէ՛ք կրակին վրայ, երկու անգամ եփ հանեցէ՛ք. իւրաքանչիւր անգամուն, հաւկթին ջուրէն մէյմէկ քիչ դնելով:

Հաւկթին ջուրը եփելով՝ շաքարին մէջ գտնուած բոլոր աղտեղութիւնները իրեն կը քաշէ և երեսը կ'ելլէ. երկու անգամ եփ ելլելէն վերջը, սկսեցէ՛ք փրփուրը առնել, և շարունակեցէ՛ք այսպէս, քիչ քիչ հաւկթին ջուրէն լեցնել, մինչեւ որ շուռուպին երեսը ճերմակ փրփուրով ծածկուի, որ նոյնպէս պէտք էք առնել ծակոտկէն շերտովով (սէսէ) մը: Շուռուպը այն ատեն մաքրուելով և պայծառանալով՝ այլեւս հաւկթի ջուրին պէտք չի կայ. բայց անգամ մ'եւս փրփրեցնելու համար, կէս դաւաթ պարզ ջուր լեցուցէ՛ք: Երբ շուռուպը թանձ-

րանայ, պէտք է կրակէն վար առնել. թանձրացած ըլլալը հասկնալու համար շերեփը կը միտէք շուռուպին մէջ, և իսկոյն դուրս հանելով՝ ձեռքերնուդ վրայ կը դարձնէք անգամ մը, եթէ շուռուպը, շերեփին կոթն ի վար տարածուի, իր թանձրութիւնը որոշեալ աստիճանին հասած կ'ըլլայ. այն ատեն շուռուպը պէտք է քամոցէ (տէլէ) մը անցունել:

Սնուշագործներու քամոցը բուրդէ կը շինուի, որ ճիշտ երկայն ձաւառի (խալ) մը ձեւը ունի, այսինքն վերի բերանը լայն և բաց, իսկ վարի ծայրը սրածայր և դոց:

Հիմա կրակին վրայ դրէք ետ առած փրփուրնիդ, զատ ամանով մը, 3 անգամ եփ հանեցէք, իւրաքանչիւր անգամուն մէյմէկ քիչ հաւկթի ջուր դնելով, ետ առէք կրակէն, թողուցէք որ քիչ մը հանգչի, յետոյ վրան քիչ մը պաղ ջուր թափեցէք, որով իսկոյն թանձր և սեւ փրփուր մը թող կուտայ, կ'առնէք այդ փրփուրը երեսէն և քամոցէ կ'անցնէք մնացածը: Որովհետեւ միւս շաքարէն քիչ եփած է, պէտք է կրկին կրակին վրայ դնել և թանձրացնել. այսպէսով կ'ունենաք երկրորդական շուռուպ մը, որ պէտք չէ միւսին խառնել, բայց կրնաք սովորական անուշեղեններու համար գործածել:

Տակաւին չի լինցաւ, այսպէսով մինչեւ 1⁰ աստիճանի թանձրութիւն մը տուած կ'ըլլաք շուռուպին, պէտք է 2⁰ և 3⁰ աստիճանի թանձրութիւն մ'ալ տալ անոր՝ որ ահաւասիկ. վերը յիշուածին պէս պատրաստուելէն վերջը, դրէք կրկին կրակին վրայ, և քիչ մը ջուր աւելցուցէք և եռացուցէք:

Շերեփին վրայէն ցուցամատով կաթիլ մը շուռուպ կ'առնէք և բթամատովնիդ սեղմելով մատերնիդ իրարմէ կամաց մը կը զատէք (ինչպէս որ կ'ընեն անուշի Էլ-ճը նայելու համար). եթէ շուռուպը թելի մը պէս երկնալով անմիջապէս

փրթի, և մատերնուդ վրայ մէյմէկ պըղտիկ կաթիլ ձեւացնէ. այն ատեն 2⁰ աստիճանի թանձրութեան հասած կ'ըլլայ, որուն կ'ըսեն ողորկուած շուռուպ, իսկ եթէ քիչ մ'աւելի եփելէդ վերջը կրկին մատերնուդ մէջտեղը առնելով սեղմէք, և յետոյ մատերնիդ բանաք, և շուռուպը առանց փրթելու երկնայ, այն ատեն 3⁰ աստիճանին հասած կ'ըլլայ:

Դանք՝ ելակի պատրաստութեան. առէք 3 քիլո ելակ, որ ըլլան քիչ մը տհաս, կաթերը հանելով դրէք ամանի մը մէջ, և վերը բացատրուած 2⁰ աստիճանի թանձրութեան հասած, եռացած շուռուպը վրան լեցուցէք, և թողէք որ պաղի: Յետոյ ելակները ծակոտկէն շերեփով մը մէջէն հանելով, շուռուպը կրկին կրակին վրայ դրէք, և 2⁰ աստիճանի թանձրութեան բերէք, (որովհետեւ ելակը ջուր թող տալուն շուռուպը կը թուլնայ):

Հետեւեալ օրը, շուռուպին վրայ $\frac{3}{4}$ լիթրա հաղարջի (քրէն+ Է-լէ-Դ-) հիւթ (այսինքն հաղարջը լաթի մը մէջ քամելով՝ իրմէ ելած ջուրը) լեցուցէք, որ պէտք է պարզուտէ անցած ըլլայ. և կրակին վրայ դնելով՝ կրկին եռացուցէք ու փրփուրը առէք. և երբոր շուռուպը 3⁰ աստիճանի հասնի, այն ատեն ելակները կրկին մէջը լեցուցէք, և միայն մէկ եփ մը տուէք ու վար առէք:

Կէս մը պաղելէն վերջը, բղրւղներու (Է-լէ-Դ) մէջ լեցուցէք, և բերանները բաց թողուցէք որ պաղին, ու յետոյ գոցեցէք հետեւեալ կերպով. Տես Հարգէ-րու թիւ 1, երես 15:

ՏԱՆԿԱԿԵՐ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

Թիւ 28. — Իզմիտի բաժանորդներէն. — ձերմակ աստղածողիկը հին աղբի (կիւպրէ) եւ ծխնելոյզի մուրով (պահա խուրումու) խառնելով երբ տնկուի գոյնը կը փոխէ:

— 9. — Ոչ, գոյնը չը փոխուիր, կրնաք գործածել:

Թիւ 29. — Վայրենի չաքայտը ի՞նչ գործողութիւնով կանուխ տրդիւնք կուտայ (այսինքն առաջին տարին ծաղիկ տեսնուի վրան):

30. — Մ. Ն. Միքայէլեան, Իզմիրէն. — Քրքաղածէ առնուած լուրերուն նայելով. Միլիտան սկսած է իր աւերումներն, որթերու պտուղներն թափելով:

Այգեպանն թեպէտ Երկրագործական Տեսչութեան յայտարարութեան համաձայն, հարկ եղած դարմանն տարած է՝ բայց մի քանի փորձերէ վերջը՝ արեւու տաքութեամբ կանաչութիւնը ոչնչացած տեսնելուն, մերժած է և այսօր շուարած կը կասկածի թէ մի գուցէ գործածութեան և ժամանակին մէջ սխալներ լինին. վասն որոյ խնդրեմ հաճեցէք որքան կարելի է շուտ հաճեցէք պատասխանել, որպէս զի օր առաջ խեղճ երկրագործն մասամբ գոնէ ինքզինքը կարենայ փրկիլ վերահաս վտանգէն: Վերոյիշեալ յայտարարութեան և մասնաւոր գրութեանց մէջ գործածելու յարմար ժամանակը կարծեմ թէ չէ յիշուած, որն ամենակարեւորն է. վասն զի Դեղէն վերջը վերահաս Արեւն՝ աւելի կիզիչ կը դառնայ և մատաղ տունկը չի կրնար տոկալ:

Թէեւ զժողարին է ձեզ համար յառաջիկայ թիւ 11ին մէջ բացատրել հարկ ու պատշաճն, սակայն խնդրեմ յօգուտ աղքատին փութացէք ձեր փորձառութեամբ օգնելով բացատրել աւելի յարմար չափն դեղերու, և գործածութեան ժամանակն, այսինքն Արեւը մարը մտնելէ վերջը կամ չի ծագած:


Պ. — Նամակը ուշ հասնելուն պատասխանը յառաջիկայ թիւին մէջ մանրամասնօրէն պիտի գրուի:

Ազգ. Ուսմն. Խորհրդոյ կողմանէ վկայեալ, փորձ և կարող դաստիարակ մը պատրաստ է Ազգ. Երկսեռ վարժարաններու տարրականէն մինչ բարձրագոյն կարգի ուսէն դասերն աւանդելու, և մասնաւորներու դաստիասելու գահացուցիչ ամսականով: Դիմել Զարգարեան գրատուն:

ԴԻՄԵՑԷՔ

Զամաւնըլար քիւ 72, Սեպուն էժ. Ալեանաբեանի քիւսկիւրի վանառասունը, ուր պիտի գտնէք ռաւ դիւրամասչիի գներով ամեն տեսակ ժեսի ծոպեր: Հոն է նաեւ կեդրոնն Ս. Սէճերեան էժէնցիի հնարած ժեսի ծոպի ոսկիէ, արծաթէ եւ մետաղէ շինուած մեքենաներու: Այս վստահութեան տունը իրեն սկզբունք քած է, ամեն յանձնարարութիւն ուղղութեամբ, փութով եւ խնամով կատարել:

Դիմեցէ՛ք գոն կը մնաք:



ՀՈՆԿ-ԲՈՆԿ-ՍԷՅԼԱՆ-Կ. ՊՈԼԻՍ

Մեծ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԵՅԻ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍՏԱԳՈՒԼԵԱՆ

ձեւով պէյ խանի դրան կից, քիւ ԽՕ

Ամենէն լաւ թէյերու ամենէն ընդարձակ վաճառատունը Կ. Պոլսոյ մէջ, որ ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն կողմերը: Գաւառներու յանձնարարութիւնները փութով և խնամով կը կատարուին:

Զինական, Հնդկական, Ճալայի և Սէյլանի էն ազնիւ թէյերէն ուղղակի բերուած, կը գտնուին հոն:

Զգուշանալ սոյն վաճառանիշին կեղծերէն:

Փնտռել ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍՏԱԳՈՒԼԵԱՆ Ստորագրութիւնը:

ԱՐՏՈՆԱՏԷՐ ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ



LESSIVE MAGIQUE

ԼԷՍԻՎ ՄԱԺԻՔ



ԼԷՍԻՎ ՎԷՆՒՍ

ԱՌԱՆՅ ԿՐԱԿԻ ԵՒ ԱՌԱՆՅ ԱՃԱՌԻ ՃԵՐՄԱԿԵՂԻՆԱՅ ԼՈՒԱՑՈՒՄ

Դիւրութիւն — Մաքրութիւն — Խնայողութիւն

Գաղղիոյ Կառավարութեան հաստատութեամբ արձանագրեալ արժար եւ ոսկի միտակերտ արժանացած

Սոյն հրաշալի նոր գիւտով, աղատեցէք այլ եւս յողնութիւններէ, աւելորդ ծախքերէ ու ժամանակի կորուստներէ և մանաւանդ ճերմակեղէնները մաշեցնող և ձեռքերու ալ վնասող անպատեհութիւններէ:

Ճերմակեղէններ, բրդեգեղններ, սեղանի ու խոհանոցի անոթներ եւ այլն լուալու ու մաքրելու համար, ամենէն ընտիր միջոցն է այս գիւտը, որ մեծ առաւելութիւն մ'ալ ունի հականերիչ ըլլալով:

Փորձեցէք, բաղդատեցէք, միշտ պիտի գործածէք:

Լէսիվ անունով մինչեւ հիմա տեսնուած ապրանքներէն զանազանելու համար պէտք է պահանջել բաքէթներու վրայ վերեւ գրուած ՄԱԺԻՔԻ և ՎԷՆՒՍԻ մարքաները, խարդախութիւն ընողը օրէնքով կը պատժուի:

Կը ծախուի մէկ գնով Պոլսոյ բոլոր արուարձաններու մէջ:

Կեդրոնատեղիներն են՝ Ղալաթիա Մոմհանէ Րիֆաթ խան, թիւ 19, 20 և Պոլիս Ֆնարգլեան խան, թիւ 3, Լ. Արսլանեան և Ս. Էմիրգէ վաճառատունն:

Քաւառաց համար գործակալութիւն կը արուի, փափաքողները պէտք է դիմեն ընդհանուր Թուրքիոյ, Եգիպտոսի, Պուլկարիոյ, Ռումանիոյ և Սերպիոյ գործակալին, հետեւեալ հասցէով:

Պ. Սէֆերեան, Մոմհանէ, Րիֆաթ խան, Թիւ 19, 20, Կ. Պոլիս, Ղալաթիա

Հանրապետութիւնը հրատարակուի ամեն Շաբաթ օր կանոնաւորապէս.
կը պարունակէ Դրական, Դիտական, Երկրագործական, Տնտեսական, Արհեստական Եւայլն, Եւայլն. շահեկան նիւթեր.
Երկրագործական, Արհեստական Եւ Իրաւարանական հարցումներու միշտ պատասխանները կը տրուին մասնագէտներու ձեռքով.
Իսթանուրդագործիւնք Եւ Թղթակցութիւնք ուղղելի են առ Տնօրինութիւն.
Հանրապետութիւնը լրագրի

Կ. Պոլիս, Զարդարեան Գրասուն, Զագմաքըլար-Յօգլու քիւ 50

در علیّه ده چقاچیلر ده . ۵۰ نومیولی زارطاریان کتبخانه سنده (حاضر اقداق) مجموعه علوم غریبه سی اداره سنده

Հանրապետութիւնը պատրաստ է ընդունել ամեն տեսակ ծանուցումներ, ազդարարութիւններ, խիստ դիւրամատչելի պայմաններով. հրատարակիչներէ կը խնդրուի իրենց երկերէն ջրկել երկու օրինակ, զոր պիտի ազդարարենք հասարակութեան, կարեւորներուն վրայ ընելով մեր քննադատումը.

ԳՈՐԾԱԿԱԼ Մ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ

ԱՅՆԹԱՊ. — Դարեգին էֆ. Պօղարեան	ԿԻՐԱՍՈՆ. — Արմենակ էֆ. Սօմունճեան.
ԱՏԱ-ԲԱԶԱՐ. — Ստեփան էֆ. Սափրիչեան	ԿԵՍԱՐԻԱ. — Դեր. Տրդատ Կ. Վ. Պալեան.
ԱՐԱԲԿԻՐ. — Յ. Պ. էֆ. Մանուէլեան.	ՄԱՐԱՇ. — Արժ. Տ. Յովհաննէս քաշաճապետեան.
ԱԹԷՆԲ. — Մկրտիչ էֆ. Մանուկեան.	ՄԱՐԶՈՒԱՆ. — Յովհաննէս էֆ. Յակոբեան.
ԳՈՒՐՏ-ՊԵԼԷՆ. — Արժ. Տ. Ստեփան քահանայ Մկրեան.	ՄՈՒՇ. — Գեղամ էֆ. Տ. Կարապետեան.
ԳԱՀԻՐԷ. — Մ. Պաղտատար էֆ. Ս. Նաթանեան.	ՊԱՆՏՈՐՄԱ. — Արմենակ էֆ. Ս. Մարեան.
ԷՐԶՐՈՒՄ. — Տեարք Ինճիճեան Եղարք.	ՊԱՐՏԻԶԱԿ. — Վահան էֆ. Զլուկի.
ԹԵԶՐԱՆ. — Կարապետ էֆ. Բարարեան.	ՊՐՈՒՍԱ. — Օննիկ էֆ. Լուծիկեան.
ԻԶՄԻՐ. — Կարապետ էֆ. Մալեճեանեան.	ՌՈՏՈՍԹՈ. — Յովհաննէս էֆ. Տէմիրեան.
ԻԶՄԻՏ. — Արաճամ էֆ. Կտաճեան.	ՍԱՄՍՈՆ. — Կարապետ էֆ. Սէֆէրեան.
ՄԱԼԿԱՐԱ. — Վ. Մանուկ էֆ. Զօլաքեան.	ՍԸՎԱԶ. — Յ. էֆ. Գարակէօղեան.
ԽԱՐԲԵՐԴ. — Խաչիկ էֆ. Քէօսէեան.	ՏՐԱՊԶՈՆ. — Սահակ էֆ. Էթմէքեան.

ԳՐԱՏՈՒՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

Դիրք գնել կ'ուզե՞ք, դիմեցե՛ք Զարդարեան Գրասունը. հոն միշտ պիտի գտնե՛ք ամեն ուզածնիդ եւ միշտ զեղոյ՛ք:

Հանրապետութիւնը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Սամաթիա, Կայարանը Թիւթիւնճիւ Արթին աղաի խանութը.
Մագրի-Դիւղ, Պ. Պօղոս Աղնաւորեանի խանութը.
Գատը-Դիւղ, Լեւոն էֆ. Զպուքճեանի դեղարանը.
Սկիւտար, Պ. Փիլիթօֆճեանի խանութը.
Բերա, Մեծ փողոց Պ. Գառնիկ Կիւլէրեանի խանութը.